

մանակի չըջանին, չինուած է նաեւ Հասան Գալայ աւանը, որ յետոյ քաղաքի վերածուած է, եւ այսօր իսկ այս անունով կը կոչուի Բասենի դաշտին մէջ եղող գիւղաքաղաքը:

Անոր բերդին տեղագրութիւնը կու տայ մեղի Հ. Ներսէս Սարգիսեան իր «Տեղագրութիւն փոքր եւ մեծ Հայոց» գրքին մէջ: Իսկ իրմէ առաջ, Հ. Ղուկաս Ինճիճեան, իր «Աշխարհագրութիւն Հորից մասանց աշխարհի» հատորին մէջ: Տեսնենք այս երկու աշխարհագիրներուն տրււած նկարները Հասան Գալայի մասին:

Հ. Ղ. Ինճիճեան կը գրէ. «Հասանգալայ կամ Հասանգալէ: Գիւղաքաղաք մեծ եւ գլխաւոր համօրէն գաւառին Բասենոյ, եւ առանձին վերին Բասենոյ, ուր նստի պէյ նորա: Հետի է յերգուրումայ իր 6 ժամաւ. այս գիւղաքաղաք է ի հարաւային ստորոտ լայնանիստ լեռինն որ է բարձր, եւ խոտաւէտ, այլ ջուր նորա սակաւ. ի հընումն կոչէր Ծիրանի լեռն... ի ստորոտ ինչ այս լեռինն ունի իւր բերդ ամուր Հասանգալայ կոչեցեալ. յորոյ անուն կոչի եւ գիւղաքաղաքն եւ լեռնն եւ ջուրն: Ի բերդէն սկսեալ ձգի պարիսպ ընդ դուռի վայրըն, որ պատէ գիւղաքաղաքն համօրէն, նաեւ դերդն. շուրջանակի զպարսպաւ ունի խրամ, ուր մարթ է ջուր արձակել յիւր դետակէն. ի բերդին դոյ եւ ծածուկ ճանապարհ ընդ երկրաւ, սակաւ առնելոյ ջուր ի Հասանգալայ գետակէն՝ ի ժամանակի պաշարման: Երկու դրունք են դուռ, որ առաջի իւրեանց ունին կամուրջ»⁷:

Իսկ Հ. Ն. Սարգիսեան, որ անձամբ այցելած է եւ գրի առած, վերին Բասենի մէջ կը գտնէ Հասանգալան եւ կը գրէ. «Գլխաւոր տեղի եւ աւան վերին Բասեն, առհասարակ պարսպապատ կրկին պարըսպաւ, եւ շինեալ է ի ծայր ստոյ Ծիրանեաց լեռին՝ զոր ի վերն յիջեցաք, ի դուռի վայրի նորին գէպ յարեւմուտս, եւ ներքնաբերդն ի գաղաթան քարակերին. իսկ կրկին պարիսպը ըստ գրից աւանին ածեալ են շուրջանակի ցածագոյն, ... չիք ուրեք յայտնուի կողմանս գեղեցիկադիր վայր քան զսա. մինչեւ ելեալ ի միջոց անդր

բերդին, տեսարան ընդարձակածաւալ դաշտին Բասենոյ հիացուցանէ զաչս. իսկ ի ներքնաբերդ անդր թէ ոք մտանիցէ, հասեալ մինչեւ ցծայր շինուածոյն ի վերայ անդնդախոր քարափանն կառուցելոյ, յափշտակեալ յիմարին միտք ընդ ահեղ եւ վսեմ բարձրութիւնն, զի ոչ միայն վերին Բասենն առաջի նորա նկարին իրերէ ի հայելոյ, այլ եւ ստորինն մասամբ. եւ ի դաշտին դետն Մուրց եւ Երասխ մանուածաւալ ընթացիւք պտոյտքեալ: Ներքնաբերդն գաւառի է ի բնակչաց եւ ամայի, ամենայն քարակերտ շինուածք եւ դետնափոր պահարանք քանդեալ եւ կործանեալ. միայն պարիսպը ահեղ կան: Է անդ ստորերկրեայ ճանապարհ ի վերուստ մինչեւ ցեղր Մուրց գետոյ, որ անընդմիջաբար առ բերդին անցանէ...»⁸:

Իսկ Հ. Ալիշան կը գրէ «Գլխաւոր տեղի համօրէն վիճակին է Հասանգալայ կամ Հասանգալայ, յահեկէ համանուն ջրոյն որ է առաջը մի Երասխայ, եւ ի հնումն Մուրց. վեց ժամաւ յարեւելից իրգուրումայ. ունի բերդ ամուր եւ կրկնապարիսպ»⁹:

Հասանգալայի հնութեան մասին կը գրէ Լէյման Հաուստ. «Հասանգալայ ինքնին ունի յատուկ ռազմադիտական գիրք, որ յետնագոյն չըջանին միայն Խաղտիններէն ճանչցուած եւ օդատարծուած է... բազմաթիւ գարաւանդներով օժտուած է... իր նկարագրեղ գիրքով կարող է մրցել Բաբերդի, Խարբերդի բերդերուն հետ, ունի կարեւոր հետքեր հնագոյն խաղտական շինութիւններու: Ծիւտ ամրոցին բակին մէջ կանդուլ կը մնայ տակաւին սեւաթոյր վէժ մը, որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ պատուանդան մը խաղտական հսկայ կոթողի մը: Իր սեպածեւ գառիթափին վը-

7. Աշխարհագրութիւն Հորից մասանց աշխարհի - Ասիա, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1806, էջ 87:

8. Տեղագրութիւն փոքր եւ մեծ Հայոց, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1864, էջ 100-101:

9. Տեղագիր Հայոց Մեծաց, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1855, էջ 40:

րայ կան վիճակներ սենեակներ, դործ խաղտական արուեստի, որոնք շատ վըտանդաւոր ճանապարհներով միայն մատչելի են եւ որոնց նմանը կարելի է նշմարել Վանի քարաժայռին վրայ, Արդիստեան սենեակներու ներքեւ»¹⁰:

Բ.

Ա. Ի. Ն. Ի. Կ. Բ. Ե. Ր. Դ.

1. Տեղագրական

Բասենի հին բերդերէն մէկն է նաեւ Աւնիկ, որ կը գտնուի համանուն գիւղին մօտիկ, Բասենի ջուր կոչուած գետակի՝ Երասխի հետ խառնուրդի մէկ անկիւնին վըրասխի հետ խառնուրդի մէկ անկիւնին վըրայ, քարաբլուրի մը ծայրը. կոչուած է նաեւ Օնիկ, եւ թուրքերէն ձիւան գալէսի:

Անունին պէս մութ կը մնայ անոր շինողն ու շինութեան թուականը, մեր հին պատմիչներուն մօտ: Ինչեքորդ դարուն է որ առաջին անգամ կը յիշատակուի. եւ որ առաջին անգամ հաւանական է որ անիկա հետեւաբար շատ հաւանական իշխանութեան շրջանին, երբ անոնք կը տիրէին ամրոյ Շիրակի եւ շուրջի երկրներուն:

2. Պատմական

Ժ. դարուն Կոստանդին Ծիրանեծին, կը յիշէ բերդս եւ «Աւնիկ» քաղաք կ'անուանէ զայն, որ կը գտնուէր Երասխի աջ ափին վրայ, եւ Ժ. դարուն առանձին իշխանութիւն էր, որուն ամիրան ստիպուելու յաւ յոյներու կայսեր անձնատուր ըլլալ, եւ իր որդին ալ անոր պատանդ տալ¹¹:

Սակայն Կոստանդին է որ այս բերդս մագիր Լաստիվերտցին է որ այս բերդս կը յիշատակէ, երբ կը խօսի Տուրքի պէկար շառաւանդներուն մասին գէպի Այրաւի արշաւանդներուն մասին գէպի 1051ի ժամանակները, վերջներով Մանազկերտի մանակները, մեծ բանակով մը կու գայ եւ պաշարումը, մեծ բանակով մը կու գայ եւ պաշարէ Աւնիկ ամրոցը, որ մեծ արկը պաշարէ Աւնիկ ամրոցը, որ մեծ գէպի գեղք մըն էր իր արշաւանքին գէպի հիւսիս. «Եւ անտի իջանէ ի գաւառ Բասենոյ, առ անառ ամրոցաւն որ կոչի Աւնիկ, յորում ետես աշխարհաժողով մարդոյ եւ

անասնոյ, եւ ոչ ինչ փոյթ արար, քանդի ի հայելոյն ետես թէ անառ է, եւ անցեալ առ նովաւ գայ ի գլուխ Բասենոյ»¹²:

Աւնիկի պաշարման ժամանակ՝ Տուրքի ի բանակին գէպ կ'ելլեն բազմաթիւ հայ իշխաններ: Որոնք էին այս իշխանները, մեղի անձանթ կը մնայ. պատմութիւնէն գիտենք՝ որ Տուրքի պէկի գէպ քաջաբար կոռուդներէն մէկն էր Թաթուլ Վանանգալի հայ իշխանը, որ սպաննելով Ասուրեան իշխանին որդին՝ ինքն ալ քաջաբար կը մեռնի:

Բերդս ապա նշանաւոր կ'ըլլայ թաթարական արշաւանքներու ժամանակ. Լէնկթիմուր եւ իր յաջորդները շատ անգամ ի վերայ ամրոցին Բասենոյ Աւնիկ կոչելու գան եւ կը պաշարեն զանիկա. «Խորասանաց ամիրան Յուսուփ գայ ի վերայ քաղաքին Երզնկայ... էառ եւ ապա եկն ի վերայ ամրոցին Բասենոյ Աւնիկ կոչելու, էառ զնա, եւ զիշխան նորին Մսիւր ցեալ, էառ զնա, եւ զիշխան նորին Մսիւր անուն կապեաց եւ հարիւր հողի ի բերդէն ի վայր ընկէց անօրէն»¹³:

Աւնիկ ու Չիրակոր Խլաթեցի, այս նոյն գէպը ոտանաւորի ձեռով կ'աւանդէ իր «Յիշատակարան աղետից» գրքին մէջ.

«Եւ զայլ բազում քաղաքանին, Զորս քանդեցին եւ գերեցին. Անտի գարձան յաշխարհս վերին, Մինչեւ Աւնիկ արշաւեցին. Զոր եւ ջանիւ մեծաւ առին, եւ Ըղնըրըն գերեցին, Անտի գարձեալ յետ զնացին, եւ զորս թողին յերջակին»¹⁴:

10. Armenien, Einst und Jetzt, II², Berlin, 1931, էջ 731-733, ըստ Տեղագրական Հետազոտութիւններու Հ. Պետրոս Տէր-Պողոսեանի, Վիեննա, 1951, էջ 69-70:

11. CONST. PORPHYROGENITUS, «De administrando Imperio», CSHB, Bonnae, 1840, c. XLV.

12. ԱՐԻՍՏ. ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ, Պատմ. տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 80:

13. ԹՈՎՄԱ ՄԵՐՈՓԵՅԻ, Պատմ. տպ. Փարիզ, 1860, էջ 45-46:

14. ՏԵՍ ԱՆԻՇԱՆ, Հայապատում, տպ. Վենետիկ, 1901, էջ 207:

մէջ: Այն ատեն, ուր այսօր Ուղուն Հասարակական կը տիրապետէ, կար ուրեմն հայկական բնիկ եւ սիրելի անուն մը: Այս ամբողջ մեր պատմութեան մէջ կոչուած է՝ Ղազար Փարպեցիէն Բողբերդ, Սերէոս Բաղրեւանդայ եպիսկոպոսէն՝ Բոլորապահակ, Ժողովուրդին աւելի հասկնալի, սակայն համազօր յորջորջումով մը: Իսկ ինքնորոգ դարուն նա կը ներկայանայ իբրեւ պաշտօնական ԱԽԱՆԸ Բասենի, Մովսէս Խորենացիէն այսպէս յորջորջուած. Ժ. դարուն՝ Կոստանդին Ծիրանածինի մօտ ստացած է ռամկին սիրելի ԱԽՆԻԿ կերպարանքը, եւ այս Ժողովուրդական յորջորջումն իբր յատուկ կը մնայ տիրապետող մինչեւ ԺԶ. դարուն սկիզբը: Այսպէս կը ներկայանայ, ինչպէս կը տեսնենք, Լաստիվերտցի մօտ. այսպէս կը ճանչնայ Շերեֆեզդին, Կլաւիտոյ եւ Թովմաս Մեծփեցի եւն: ԺԶ. դարէն սկսեալ Աւնիկ հռչակաւոր անունն ալ մոռացութեան կ'ենթարկուի եւ անոր փրատակներուն վերայ կը կանգնի նոր անուն մը՝ Հասանկալէ»¹⁹:

Այս քիչ մը բանաստեղծական թռիչքով տողերը շարելէ առաջ՝ Հ. Պետրոս իր քննութեան բովէն անցուցած է, մէկիկ մէկիկ, մեր կամ օտար, հին թէ նոր պատմագիրները եւ ճանապարհորդները, անոնց դրութիւնները վերլուծելով, բայց ջուրը իր ջաղացքին դարձնելով:

Մեծ. Հեղինակը իր առջեւ ունեցած է հին թէ նոր անուանի պատմագիրներ եւ աշխարհագիրներ. Լաստիվերտցի, Թ. Մեծփեցի, Կ. Ծիրանածին, Ղ. Փարպեցի. նորերէն, Աղոնց, Կոխ, Կլաւիտոյ, Շերեֆեզդին, Ինճիճեան, Ալիշան, Տաւեան եւ ուրիշներ. բայց զանոնք մէկիկ մէկիկ կը ջանայ մեկնաբանել, հասնելով այն եզրակացութեան, զոր վերեւ մէջ բերինք, Բողբերդ, Աւնիկ եւ Հասան Գալէնոյն բերդին անուանեան են:

Եւ որպէս զի հարցը լաւաւորին լուսաբանէ, հակառակ իրեն դէմ եղած փաստերուն, հին Աւնիկէն զատ՝ նոր Աւնիկ կամ Արդի Աւնիկ անունով բերդ մը կը հնարէ. բերդ մը՝ որ ոչ հին ատեն գոյու-

թիւն ունեցեր է, եւ ոչ ալ հիմա գոյութիւն ունի, քանի որ սկիզբէն մէկ Աւնիկ եղած է:

Տեսնենք այն պատմագիրները, որոնք կը խօսին Աւնիկի մասին: Օտարներէն միակ պատմագիրը որ կը յիշէ Աւնիկը, է Կոստանդին Ծիրանածին, Ժ. դարուն: Կոստանդին կը յիշէ Աւնիկը, եւ կը կոչէ «τὸ καὶ στρον τοῦ Ἀβνίκος», եւ կը դնէ Բասենի մէջ, Երասխի «այս կողմը». անոր յիշատակութիւն մըն է «Երասխի այս կողմը». ի՞նչ կը հասկնայ Կ. Ծիրանածին «Երասխի այս կողմը» ըսելով: Հ. Պետրոս Տէր-Պողոսեան՝ արեւմտեան կողմը, Երասխի արեւմտեան ափին կը հասկնայ. մինչ Ինճիճեան եւ Ալիշան, որոնք շատ լաւ կը ճանչնային Կ. Ծիրանածինը եւ անոր «այս կողմ Երասխի» բացատրութիւնը, Երասխի արեւելքը կը զետեղեն Աւնիկը: Տէր-Պողոսեան կը զարմանայ որ երկու Միթրեանները՝ իրեն հակառակ կը հասկնան Ծիրանածինի «այս կողմ» բացատրութիւնը. «Չարմանալի է որ, կը դրէ, թէ՛ Ինճիճեան թէ՛ ալ Ալիշան, այս տեղիքին ծանօթ ըլլալով հանդերձ, Կոստանդինի Աւնիկը կը նոյնացնեն Արդի Աւնիկի հետ»²⁰: Ուստի, կ'եզրակացնէ Մեծ. Հեղինակը, Ինճիճեանի եւ Ալիշանի համար, Ծիրանածինի Աւնիկը՝ արդի Աւնիկն էր, Երասխի արեւելեան ափին վրայ. անոնք երեսին արեւմուտք դարձուցած կը զիտէին Երասխը, հետեւաբար Աւնիկը «այս կողմ» էր. իսկ Հ. Պետրոս Տէր-Պողոսեան հակառակէն, հետեւաբար Աւնիկը կը տեսնէր Երասխի արեւմտեան ափին վրայ: Բնական է, երկու կարծիքներն ալ տարտամ կէտ մը ունին. բայց Տէր-Պողոսեան որոշ իր տեսութեան վրայ, որոշ որ Կ. Ծիրանածինի Աւնիկը Երասխի արեւմտեան կողմն էր, կ'եզրակացնէ. «Այս վկայութեան համեմատ, քանի որ Աւնիկը Երասխի այս կողմը կը գտնուի, ուրեմն կարելի է արդի Աւնիկի հետ նոյնացնել»:

19. Տեղագր. հետազոտ. էջ 127-128:

20. Անդ, էջ 120:

քանի որ արդի Աւնիկը՝ Երասխի Արեւելեան կողմը կը գտնուի. ուրեմն, պէտք է որ արեւմտեան կողմը եւս ուրիշ Աւնիկ մը գոյութիւն ունենայ, կ'եզրակացնէ Տէր-Պողոսեան, եւ ատիկա հին Աւնիկն է, որ յաջորդաբար կը նոյնացնէ Բողբերդի եւ Հասանգալայի հետ:

Մեր պատմագիրներէն Ա. Լաստիվերտցին է որ կը յիշէ Աւնիկը, «խաղայ իջանէ Տուարածոյ տափ, եւ անտի իջանէ յընդարձակ դաշտն Բասենոյ, առ անառ ամբողջան, որ կոչի Աւնիկ»²¹: Հոս, ինչպէս կը տեսնուի, Լաստիվերտցին մասնաւոր կը յիշատակութիւն մը չունի Աւնիկի տեղոյն մասին, միայն կը յիշատակէ Տուարածոյ տափ անունով դաշտը, որուն մէջն էր կամ մօտիկն էր Աւնիկ ամբողջը: Մանանդեան, քաջ եւ հմուտ պատմաբան եւ աշխարհագիր, կը ճշտէ Տուարածոյ տափ դաշտին տեղը. «Տուարածոյ տափի տեղը գրաւել է Բասենից եւ Աւնիկից դէպի հարաւ-արեւելք»²²:

Սակայն այս ճշտումը ուղիղ չէ նկատած Հ. Պետրոս Տէր-Պողոսեան, այլ բնականաբար, եւ ոչ մէկ կերպով իրականութեան համաձայն, եւ ոչ ալ Լաստիվերտցիի վկայութեան բնական իմաստին համապատասխան²³: Ինք կ'եզրակացնէ թէ «հիմնուած այդ վերոյիշեալ աղբիւրներէն»

«հիմնուած այդ վերոյիշեալ աղբիւրներէն» վկայութեան վրայ (որոնք իրեն համար վկայութեան վրայ ստիպուած ենք սխալ կառակ կը վկայեն) ստիպուած ենք սխալ նկատել ոչ միայն Ալիշանի, Հերշմանի եւ Նիկատի ոչ միայն Ալիշանի, Հերշմանի եւ Մանանդեանի կարծիքները, այլ եւ Մանանդեանի տեղագրութիւնը Տուարածոյ տափի վրայ, Հերշմանի ու Նաեւ Մանանդեանի ինճիճեանի, Ալիշանի, Մանանդեանի եւ ուրիշներու. եւ հոս է որ անհրաժեշտ է որոշ մը, մէջտեղ կը հանէ, իրեն նոր գիւտ մը, մէջտեղ կը հանէ,

զորում: Այդպիսի վայր մը մեզի կը թուի այժմեան Սարկաղի լեռնազաւոր»²⁶: Գիւտը եղած է. թէեւ Հ. Պետրոս Տէր-Պողոսեան ինք իսկ որոշ չէ իր կատարած ճշտութիւն վրայ. կը քուի, կ'ըսէ, եւ որոշ փաստեր չունի:

Կը սկսի Տուարի պէկի արշաւանքի ճամբան փնտռել. ուսկի՞ց անցած է Տուարի պէկ իր մեծ բանակով՝ դէպի Բասեն կատարած իր արշաւանքի օրերուն. կը քննէ, կը թափառի, եւ անուղղակի կերպով անոր ճամբէն կը դուշակէ նաեւ Աւնիկի տեղը, եւ իրեն հետեւանք, կը հաստատէ՝ թէ Աւնիկ եւ Հասանգալայ նոյն բերդին անուններն են:

Աւնիկը կը յիշատակէ նաեւ Թովմաս Մեծփեցի. «Սորոսանաց ամիրան Յուսուփ դայ ի վերայ քաղաքին Նզնկայ... եւ էառ զնա, եւ ապա եկն ի վերայ ամրոցին Բասենոյ՝ Աւնիկ կոչեցեալ, էառ զնա եւ զիշխանն նորին Մսիր անուն կապեաց»²⁷:

Ինչպէս որոշ կը տեսնուի, Թ. Մեծփեցի եւս Աւնիկ ամրոցը Բասենի մէջ կը դնէ. առանց անոր ճիշտ դիրքը որոշելու. սակայն պատմագիրն միտքը որոշ կը յայտնուի, թէ Յուսուփ ամիրան նախ էր յորումը կը գրաւէ, եւ ապա «եկն ի վերայ ամրոցին Աւնիկ կոչեցեալ». ուրեմն էր յորումը առնելէ ետք՝ կը յառաջանայ դէպի արեւելք, եւ հոն է որ կը գրաւէ Աւնիկը. ասկէ կը հետեւի որ Աւնիկ հեռու էր էրզրումէն, եւ ոչ թէ մօտիկ. եւ առանձին ամրոց մըն էր. այս է Թ. Մեծփեցիի միտքը, թէեւ Հ. Պետրոս Տէր-Պողոսեան այլ կերպով կը հասկնայ, հակառակ Ինճիճեանի, Ալիշանի, Մանանդեանի եւ ուրիշներու. եւ հոս է որ անհրաժեշտ է որոշ մը, մէջտեղ կը հանէ,

21. Պատմ. անդ, էջ 80:

22. Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆ. Հայաստանի գլխաւոր հնավայրերը, Երևան, 1936, էջ 53-54:

23. Տեղագր. հետազոտ. էջ 114:

24. Անդ, էջ 115:

25. Անդ, էջ 116:

26. Անդ:

27. Պատմութիւն, տպ. Փարիզ, 1860, էջ 45-46:

ինչպէս ըսինք, Հին-Աւնիկ եւ Արդի-Աւնիկ, իբր լուծում: Հուսկ գրելով իբրեւ գեղեցիկ եղբայրացու թիւն. «Թովմա Մեծոփեցիի Աւնիկի գրաւումի մասին համառօտ յիշատակութիւնը եթէ լրացնենք Շերեֆեղիինի մանրամասն նկարագրութեամբ, կ'ունենանք հետեւեալ հաստատուն իրողութիւնը, թէ Աւնիկ նոյն է Հասանդաւայի հետ, եւ ոչ մի աւելցում թիւն ունի Արդի Աւնիկին հետ»²⁸:

Շերեֆեղիինի ճանապարհորդական տրււածները, Աւնիկի մասին, Տէր-Պողոսեանի նպատ իրեն իբր փաստ կը բերէ եւ հետեւանքներ կը հանէ. սակայն Շերեֆեղիինի պատմածներէն չի հետեւիր թէ Աւնիկ նոյն է Հասանդաւայի բերդին հետ. եւ հետեւաբար նաեւ, թէ Թ. Մեծոփեցիի Աւնիկը նոյն է Հասանդաւայի հետ: Երկու զանազան բերդերու միացումով՝ Հասանդաւայ մէջտեղ չի գար:

Բողբերդ իրական Բասենի բերդն էր, եւ այսօրուան Հասանդաւայն. Բասենի բերդ կոչուած է նաեւ Աւնիկ բերդը, եւ այս Բասենի բերդ կոչումն է որ շփոթութիւն ստեղծած է. իրական է որ Թ. Մեծոփեցիի Աւնիկը Բասենի բերդ կը կոչէ, սակայն նկատի առնելու ենք որ Բողբերդ Վերին Բասենի մէջ կը գտնուէր, եւ որ մեր պատմիչները առանց զանազանելու Բասեն կ'ըսեն: Յակոբ Կարնեցի կը զանազանէ «երկիրն Վերին Բասենայ, ... ունի մեծ բերդ պարսպաւոր ի վերայ վիմի հաստատեալ, որ հայ բարբառով կոչեն այժմ Դորոնք, եւ թուրք բարբառով Հասան Դաւայ»³⁰:

Լատիններու պատմածէն եւս որոշ կ'երեւի որ Աւնիկը վարին Բասենի մէջ էր, երբ կը խօսի, ինչպէս ըսինք, Տուղրիլ պէկի արշաւանքին մասին, որ 1051 թ. մանախները կու գայ եւ կը պաշարէ Աւնիկը, «եւ անտի իջանէ ի դաշտն Բասենոյ, առ անառ ամրոցաւ որ կոչի Աւնիկ, յորում ետես աշխարհաժողով մարդկան եւ անասնայ, եւ ոչինչ փոյթ արար, քանզի ի հայկոյ իւր միայն ետես թէ անառ է, եւ անցեալ գայ ի գլուխ Բասենոյ»³¹: Հոս, ինչպէս կը տեսնուի, «ի գլուխ Բասենոյ» բացատրութիւնը ու-

րոշ ցոյց կու տայ թէ Աւնիկ վերին Բասենի մէջ էր, այլ Վարին Բասենի մէջ, ուսկից Տուղրիլ կ'երթայ «ի գլուխ Բասենոյ», որ է Վերին Բասեն, ուր ինչպէս տեսնուի, կը գտնուէր նշանաւոր Բողբերդը, որ է արդի Հասան գաւառ. ուստի կարելի է որ Բողբերդ-Հասանդաւայ եւ Աւնիկ նոյն բերդերը ըլլան:

Վերեւ ընդդէմէնք Աշխարհաժողով մարդկան եւ անասնայ, ցոյց տալու, համար որ Աւնիկ փոքրիկ ամրոց մը էր, ինչպէս կը կարծէ Հ. Պետրոս Տէր-Պողոսեան, այլ ընդարձակ, ուր ոչ միայն բազմութիւն մը ժողովուրդի կրնար մտնել, այլ եւ անասուններ ալ:

Այդ եղբայրացութիւնը հակառակ է նաեւ Շերեֆեղիինի, որովհետեւ Շերեֆեղիին որեւէ խօսք չ'ըներ թէ Աւնիկ նոյն է Բողբերդի կամ Հասանդաւայի հետ. անկա պարզապէս կը նկարագրէ Աւնիկը. բայց Մեծ. Հայրը անոր նկարագրութիւնը Հասանդաւայի կը վերագրէ, առանց որոշ պատճառներու, իբրեւ թէ Շերեֆեղիինի Աւնիկը՝ իր մօտէն զինուորական ճանապարհներ չունի, ինչ որ ունի Բողբերդը կամ Հասանդաւայն, առանց նկատելու որ դարերու ընթացքին ճանապարհները փոխուած են, քանզի ուրիշ ուղղութեամբ նորեր չ'իյնում:

Հուսկ, Հ. Պետրոս Տէր-Պողոսեան կը խօսի Կլաւիտոյ սպանիացիի մասին, որ նկարագրած է մեր Աւնիկը. Կլաւիտոյ եւս ուղղակի որեւէ խօսք չունի Հասանդաւայի մասին, այլ կը խօսի Աւնիկի մասին: Հ. Պետրոս կ'ուզէ որ անոր նկարագրութիւնը համապատասխանէ Հասանդաւայի, եւ կը զրէ այսպէս.

«Բերդին նկարագրութիւնը ըստ ամենայնի կը համապատասխանէ Հասանդաւայի, եւ Կլաւիտոյի Աւմիան կը համապատասխանէ Աւնիկին». Աւմիան ձեւը

28. Տեղագր. հետազոտ. էջ 95:

30. Տեղագրի վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 16:

31. Պատմ. էջ 80:

պարզ սխալագրութիւն կը համարի, եւ կ'երկարացնէ. «եւ այսպէս կ'ունենանք Կլաւիտոյէն նկարագրութեամբ ճշգրիտ գերբը Հասանդաւայի, Աւնիկ անունով»³²: Չրի եղբայրացութիւն:

Այժմ տեսնենք աւելի մօտիկ աշխարհագրորդներու եւ երկրախոյրներու կարծիքները Աւնիկի մասին, զորս կը քննադատէ Հ. Պետրոս Տէր-Պողոսեան:

Ազոնցի համաձայն, Բողբերդ՝ Բասենի դաւառին մէջ էր, եւ 2. դարուն յայտնի էր, բայց անոր տեղը անորոշ էր. Բասենի մէջ էր, ոչ հեռի Թէոդոսուպոլէնէն»³³:

Համմեր՝ Հասանդաւայն եւ հին Թէոդոսուպոլիսը կը նոյնացնէ³⁴, Կոսի Աւնիկի սուպոլիսը կը նոյնացնէ³⁵, Կոսի Աւնիկի սենի վաշտին մէջ, հիւսիս արեւելեան սահմանին վրայ³⁶: Նոյն հեղինակը առանձին կու տայ Հասանդաւային նկարագրութիւնը, եւ բնաւ չ'ըներ թէ Հասանդաւայն նոյն բերդն է Աւնիկին հետ³⁶: Տաշեան եւս կ'ընդունի Կոսի եւ Համմերի կարծիքը:

Ինճիճեան, որ իր դարուն ամէնէն մեծ աշխարհագիրը եղած է, երկար կը խօսի եւ կը զրէ Աւնիկի եւ Հասանդաւայի մասին: Խօսելով Վերին Բասենի մասին, հոն կը զնէ «Հասանդաւայ կամ Հասանդաւայի գիւղաքաղաք մեծ եւ զիւսուր համարէն դաւառին Բասենոյ, եւ առանձին Վերին Բասենոյ: Հեռի է Երզրումայ իբրեւ վեց Բասենոյ: Հեռի է Երզրումայ իբրեւ վեց Բասենոյ... անցանէ առ զիւսուր Զուրն որ նոյնպէս հարաւայ վերոյդրեալ Զուրն որ նոյնպէս Հասանդաւայ Զուրն կոչի, եւ խառնի յեւրոսի առնթրէր Զուրն Գէօփրիւսի: Այս բառի առնթրէր է հարաւային ստորոտ լայն զիւղաքաղաք է հարաւային խոտաւէտ, նանիստ լեռինն որ է բարձր եւ խոտաւէտ, այլ Զուր նորա սակաւ. ի հնումն կոչէր Թիրանի լեռն...: Ի յոստ ինչ այսր լեռն ունի իւր բերդ ամուր Հասանդաւայ կոչեցեալ, յորոյ անուն կոչի եւ զիւղաքաղաքն եւ լեռնն եւ Զուրն: Ի բերդէն սկսեալ ձգի պարիսպ ընդ դառ ի վայրն որ պատէ զիւղաքաղաքն եւ համարէն նաեւ զբերդն. շուրջանակի զպարսպաւ ունի խրամ, ուր մարթ է Զուր արձակել յիւր գետակէն. ի բերդին դոյ եւ ծածուկ ճառագարն ընդերկրեայ, սակաւ առնելոյ

Զուր ի Հասանդաւայ գետակէն ի ժամանակի պաշարման: Երկու դրունք են սորա, որք առաջի իւրեանց ունին կամուրջ»³⁷:

Այս առանձին, կը խօսի Աւնիկի մասին, երբ կը թուէ Երասխի աջակողմեան զիւղերը. «Աւնիկ կամ Աւնիկ ի տաճկաց կոչի ձիւան գալէսի, ամրոց հին եւ զարմանալի, իբրեւ տասն ժամաւ հեռի ի Հասանդաւայէ ի հարաւակողմն: Էս ապառաժ որձաքար սեպուհ մեծ բարձրացեալ յերկրէ յոյժ յոյժ, եւ յամենայն կողմանց յերեւ թէ կոփեալ հարթ հաւասար, որ ոչ թուի ձեռագործ մարդկան այլ յաւէտ մեծագործ բնութեան»³⁸:

Եւ այսպէս կը շարունակէ անոր նկարագրութիւնը, զոր տեսնուի նախապէս, որ նկատի առնելու կէտ մը եւս կ'ուզենք իւրեւ թէ հակառակ Տէր-Պողոսեանի, թէ Աւնիկ փոքր էր եւ բազմութիւն կրնար առնել. կը զրէ «ի ինեւ երկուդի թշնամեաց կամ աւաղակաց, բնակիչք մերձակայ տեղեաց պատուարին անդ, իբրեւ յանքոյթ եւ յանկառն վայրի»³⁹: կարեն բազմութիւն մարդկան բնակել»³⁹: Երկու ընդդրումներ ըրինք ցոյց տալու որ Հ. Ինճիճեանի նկարագրութիւնը համաձայն է Լատիններու նկարագրութեան, թէ «Լէնկթիմուր անդ տեսանէ զաշխարհաժողով մարդկան»:

32. Անդ, էջ 109: Իսկ Կլաւիտոյի մասին տե՛ս Ազոնցիի շարքի շարքի եւ Անդիկովասի պատմութեան, Ուղեգրութիւններ, Ա. հատոր, Երևան 1932, էջ 65-146, թրգմ. Յ. Յակոբեան:

33. Ա. Ունի, Հայաստանի Գեոգրաֆիկական Գործունէութիւն, Տ. Պետրոս Տէր-Պողոսեանի, էջ 58:

34. Տե՛ս Տեղագր. հետազոտ. էջ 73-74:

35. Անդ, էջ 78-79:

36. Անդ, էջ 85:

37. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիա, հատ. Ա. 1806, էջ 87:

38. Անդ, էջ 89:

39. Անդ:



